Դավիթ Գևորգյան

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐԵԼՈՒ ԶԱՔԱՐԵ ԱՄԻՐՍՊԱՍԱԼԱՐԻ ՓՈՐՁԵՐԸ

Բանալի բառեր. Զաքարե ամիրսպասալար, Մխիթար Գոշ, հայ-վրացական եկեղեցական հարաբերություններ, եկեղեցական ժողովներ, դավանական վեճեր, դավանական հանդուրժողականություն:

Մուտք. Հայ-վրացական զինակցությունը Զաքարյանների օրոք

1184 թ. Գեորգի Գ-ին (1156-1184) վրացական գահին հաջորդում է նրա դուստրը՝ Թամարը (1184-1213): Վերջինիս օրոք Վրաստանը ապրում է թե՛ քաղաքական, թե՛ մշակութային ու տնտեսական վերելք: Այս շրջանում նաև հզորանում է Զաքարյան տոհմը՝ Սարգիս Զաքարյանի և նրա որդիներ Զաքարեի ու Իվանեի գլխավորությամբ, որոնք վրաց արքունիքում մեծ վստահություն են վայելում և ստանձնում կարևոր պաշտոններ[1]: Զաքարյանների նկատմամբ այդպիսի վստահությունը ոչ միայն Իվանե Օրբելիի ապստամբության ժամանակ Գեորգի Գ թագավորին ցուցաբերած աջակցության արդյունքն էր, այլ նաև այն բանի, որ նրանք նշանակալի ներդրում ունեցան Թամարի՝ ազգությամբ ռուս Գեորգի ամուսնու ապստամբությունը ճնշելու գործում[2]: Զաքարյան եղբայրները, գլխավորելով հայ-վրացական զորքը, մոտ քսանհինգ տարի տևած պայքարի շնորհիվ կարողացան ազատագրել Հայաստանի հյուսիսարևելյան հատվածը և կենտրոնական նահանգների մի մասը, որտեղ ունեին ժառանգական իրավունքներ ու օժտված էին ներքին ինքնավարությամբ[3]: Իսկ Կիլիկյան Հայաստանի վարդապետների պատասխան նամակում ամիրսպասալարը հիշատակվում է որպես «մեծ սպարապետ և շահնշահ արևելեան կողմանցն»[4]: Այսինքն՝ Զաքարեն, ազատագրելով Հայաստանի զգալի մասը, վերցրեց նաև Բագրատունյաց «շահնշահ» տիտղոսը, ինչը նույնիսկ Զաքարյան ազգատոհմում դարձավ հատուկ անուն:

Այսպես, Զաքարյանների օրոք ձևավորվել էր հայ-վրացական բարեհաջող զինակցություն, որը կարող էր վտանգվել լարված դավանական հարաբերությունների պատճառով: Ինչպես կտեսնենք, Զաքարեն որոշում է մեղմել ստեղծված իրավիճակը՝ եկեղեցում նորամուծություններ կատարելու միջոցով: Այս խնդիրը ավելի լավ պատկերացնելու համար, կարծում ենք, նախ հարկավոր է անդրադարձ կատարել 12-րդ դ. սկզբներից մինչև նույն դարի 30-ական թթ. տեղի ունեցած անցքերին:

1. Հայոց և Վրաց եկեղեցիները հաշտեցնելու Դավիթ Դ Շինարարի փորձը

Դավիթ Դ Շինարարը (1089-1125), որը գլխավորել էր սելջուկ-թուրքերի դեմ պայքարը, 1103 թ. գումարեց Ռուիս-Ուրբնիսի եկեղեցական ժողովը, որն առաջին հերթին կոչված էր կենտրոնացնել թագավորի իշխանությունը, հեռացնել իրեն ոչ ցանկալի

---

[1] 1176-1177 թթ. Գեորգի Գ-ի դեմ Իվանե Օրբելիի կազմակերպած ապստամբության մասնակիցներից շատերը՝ այդ թվում Սարգիս Զաքարյանը՝ իր որդիների և եղբորորդու հետ միասին անցնում են թագավորի կողմը՝ դրա համար ստանալով պարգևներ: Հետագայում վրաց արքունիքում Զաքարյանների նկատմամբ ձևավորվում է մեծ վստահություն: Նրանք նշանակալի ներդրում են ունենում Թամար թագուհու՝ ազգությամբ ռուս ամուսնու՝ Գեորգիի ապստամբությունը ճնշելու գործում: Թամարի օրոք Սարգիս Զաքարյանը ստանձնում է ամիրսպասալարի պաշտոնը, որը 1187 թ. Զաքարեին է հանձնվում: Իվանեին տրվում է գործակալությունը (մսախուրթուխուցեսոբա), իսկ Զաքարեի մահից հետո նա վերցնում է աթաբեկությունը՝ փաստացի ձեռք բերելով գրեթե արքային համահավասար իշխանություն (տե՛ս Մարգարյան Հ., Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր, Ե., 1980, էջ 187-188: Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի յեվ հայերի մասին, հ. Բ, Յրեվան, 1936, էջ 11-13, 24, 34: «Դիվան հայ վիմագրության», պրակ IX, Լոռու մարզ, կազմեցին Ս. Բարխուդարյան, Կ. Ղաֆադարյան, Ս. Սաղումյան, Ե., 2012, էջ 298):

[2] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», ԳԱ հրատ., հ. III, Ե., 1976, էջ 533:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 541-542:

[4] Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիր.՝ Կ. Մելիք-Օհանջանյանի, Ե., 1961, էջ 168:

բարձրաստիճան հոգևորականներին՝ նրանց փոխարեն նշանակելով իր համախոհներին[1]: Ժողովի ընթացքում ընդունված կանոններից 12-րդը և 13-րդը վերաբերում էին հայոց եկեղեցուն. «[Կանոն] 12... հերձվածողներից խաչեցարները հայերն են... Սրանց մասին սահմանում ենք, վոր [ուղղափառություն ընդունելու դեպքում] սրանց լիովին մկրտեն ինչպես հեթանոսներին. Վորովհետև գտանք, վոր այլ մեծ յեկեղեցիներն այսպես են անում, ինչպես որինակ Անտիոքի պատրիարքական աթոռն ու նրան հետևող ամբողջ արևելքի յեկեղեցիները»[2]: Պարույր Մուրադյանն այս տեղեկությանը հավելում է, որ 13-րդ կանոնի համաձայն արգելվում էր ամուսնությունն ու խնամությունը միաբնակների հետ[3]: Պետք է նշել, որ հայերը ևս ժամանակին նման կանոններ են սահմանել[4]:

Դավիթ Շինարարն իր գործունեության տարիներին որդեգրում է կրոնական և ազգային հանդուրժողականության քաղաքականություն՝ առաջին հերթին պետական շահից ելնելով: Օտարների տիրապետության ու երկարատև պատերազմների արդյունքում Վրաստանի ամայացած շրջաններում Դավիթ թագավորը բնակեցրեց հայերի, ղփչաղների՝ ցանկանալով զարգացնել տնտեսությունը և համալրել իր զորքը, իսկ Վրաստանի քաղաքներից շատերը հիմնականում բնակեցված էին մահմեդականություն դավանողներով, հայերով ու այլ ազգերով[5]:

Դավիթ Դ-ն, ազատագրելով նոր տարածքներ, իր թագավորության մեջ ներառում էր նաև տարբեր ազգերի, որոնց ղեկավարելու խելամիտ միջոցը կրոնական ու ազգային հանդուրժողականությունն էր: Բնականաբար, նման պայմաններում, երբ վրացական թագավորության տիրապետության տակ էին անցել մի շարք հայկական տարածքներ, ուր մեծ թիվ էին կազմում հայոց եկեղեցու հետևորդները, Դավիթ Շինարարը չէր կարող անտարբերության մատնել հայ-վրացական եկեղեցական հարաբերությունների խնդիրը, որը հնարավոր է խաթարեր հայ-վրացական զինակցությունը: Այս պատճառով 1123-1125 թթ.[6] միջակայքում Թբիլիսիում հայ և վրաց վրադապետների միջև տեղի է ունենում եկեղեցական ժողով: Կարող ենք եզրակացնել, որ Դավիթ Շինարարի նախաձեռնությամբ գումարված ժողովը չի հանգեցրել որևէ արդյունքի: Կողմերը փորձել են ոչ թե միավորման կամ հաշտեցման եզրեր գտնել այլ ընդամենը բանավիճել են բարդ աստվածաբանական հարցերի շուրջ՝ փորձելով հիմնավորել իրենց հավատքի ուղղադավանությունը, որն էլ ի վերջո ժողովը տարել է փակուղի[7]:

Այսպիսով, Դավիթ Շինարարի օրոք Արևելյան Հայաստանի հայոց եկեղեցին հայտնվեց Վրաստանի քաղաքական ազդեցության տակ, և, չնայած պետության վարած կրո-

---

[1] Տե՛ս Khartlis tskhovreba, Tbilisi, 2014, p. 175: Նաև Lordkipanidze M., Georgia in the XI-XII centuries, Tbilisi, 1967,
URL: http://web.archive.org/web/20160313043719/http://georgianweb.com/history/mariam/chapter2.html#5, 13.03.2016.

[2] Մելիքսեթ-Բեկ, Լ. Վրաց աղբյուրները Հայաստանի յեվ հայերի մասին, հ. Ա, Յերվան, 1934, էջ 124:

[3] Տե՛ս Մուրադյան Պ., ԺԱ-ԺԳ դարերի հայ-վրացական դավանական խնդիրները և Մխիթար Գոշի «Առ վրացիսն» թուղթը, Ս. Էջմիածին, 2011, էջ 34:

[4] Անանիա Մոկացի կաթողիկոսի հրահանգով և ժամանակի մի շարք նշանավոր վարդապետների համաձայնությամբ որոշում է կայացվել նորից վերամկրտել բոլոր քաղկեդոնականներին՝ ինչպես աղանդավորների: Իհարկե, սա ուղղված չէր միայն վրացիներին: Տե՛ս Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, Պետերբուրգ, 1885, էջ 178:
Ինչ վերաբերում է Ռուիս-Ուրբնիսի ժողովի 13-րդ կետին, ապա նմանատիպ կանոն վրացիների համար հայոց մեջ սահմանվել է դեռևս 7-րդ դարում՝ Աբրահամ կաթողիկոսի կողմից, որով արգելվում էր վրացիների հետ ոչ միայն ամուսնությունը, այլև ցանկացած հարաբերություն՝ առևտրից բացի (տե՛ս «Գիրք թղթոց», Երուսաղէմ, 1994, էջ 363-364): Առհասարակ, միջնադարում խառն ամուսնությունները չեն ողջունվել, օրինակ Մխիթար Գոշը սահմանում է, որ չի խրախուսվում այլազգիների հետ ամուսնությունը. եթե հերձվածողի հետ է կատարվում պսակը, ապա դատաստանը թողնում են ծնողների խղճի վրա, իսկ հեթանոսի հետ պսակադրության դեպքում ամուսնացողը և նրա ծնողները զրկվում են հաղորդությունից Տե՛ս Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, աշխատասիր.՝ Խ. Թորոսյան, Ե., 1975, էջ 365:

[5] Տե՛ս Suny R., The making of the Gerogian nation, Bloomington, 1994, p. 35-36, 38.

[6] Տե՛ս Մելիքսեթ-Բեկ Լ., «Վարդապետք Հայոց հիւսիսային կողմանց» և նրանց ինքությունը, վրացերենից թարգմ.՝ Հր. Բայրամյան, էջմիածին, 2016, էջ 145:

[7] Տե՛ս Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի յեվ հայերի մասին, հ. Ա, էջ 219-220: Տե՛ս նաև Ջուանշէր պատմիչ, Համառօտ պատմութիւն Վրաց, Վենետիկ, 1884, էջ 122:

նական հանդուրժողականության քաղաքականությանը, երկու եկեղեցիների միջև հարաբերությունները շարունակում էին մնալ լարված: Երկու եկեղեցիների հարաբերությունները կարգավորելու կարիքը գիտակցում էր Դավիթ Շինարարը, և այս խնդիրը կրկին ծառացավ 12-րդ դ. վերջերին ու 13-րդ դ. սկզբներին՝ Թամար թագուհու և Զաքարյան եղբայրների օրոք:

2. Մխիթար Գոշի «Առ վրացիսն» թուղթը

Խնդրո ժամանակաշրջանի վերաբերյալ կարևոր ու վստահելի սկզբնաղբյուր է հանդիսանում Մխիթար Գոշի՝ Զաքարեի խոստովանահոր[1] ու ժամանակի նշանավոր վարդապետներից մեկի «Առ վրացիսն» կոչվող թուղթը: Ըստ Պ. Մուրադյանի՝ թուղթը գրվել է մոտ 1206 թ.[2]: Թուղթն ուղղված է Իվանե ու Զաքարե եղբայրներին, Թամար թագուհուն, ինչպես նաև վրաց կաթողիկոսին, եպիսկոպոսներին ու վարդապետներին[3]: Սա Մխիթար Գոշի երկրորդ գրվածքն է՝ հղված վրացիների կաթողիկոսին, առաջինը, ըստ Լ. Մելիքսեթ-Բեկի, Կիրակոս Գանձակեցու հիշատակած «Գիրք մի յայտարարութիւն ուղղափառութեան» երկասիրությունն է, որը մեզ չի հասել[4]:

Գոշն իր գրությունն սկսում է մի փոքր նախադրությամբ, որտեղ հեղինակը նշում է, թե ինչու է որոշել գրել այդ թուղթը. «Զայս գծագրութիւն սակաւուք հարկաւոր կարծեաւք եդաք յաղագս Վրաց, որ ոչ սակաւ թշնամութեամբ վարին ընդ Հայս, աշակերտելով Յունաց: Եւ արդ, զի նախ առ ձեզ է նախադրութիւն բանիս, ո՛վ աստուածասէր եւ բարեպաշտ իշխանք իշխանաց Զաքարէ եւ Իվանէ... տեսանելով և լսելով զբամբասանս վրաց ի դաւանութիւնս մեր հաւատոյ և կարգաց եկեղեցւոյ, յոյժ խոցեալ լինէի հոգի, մանաւանդ զի հաւանելի թուելով ձեզ ասացեալքն առ ի նոցանէ, յայսոսիկ եկի միտս՝ գրել սակաւուք զճշմարիտ հաւատոյս մերոյ զաւրինակ»[5]: Մեջբերումից ակներև է, որ թղթի գրության հիմնական պատճառը հայոց դավանանքի նկատմամբ հնչած զրպարտություններն են, ինչպես նաև կրոնական անհանդուրժողականությունը:

Մխիթար վարդապետն իր թղթում խստորեն դատապարտում է նրանց, ովքեր քարոզում են ժողովրդին, թե թուրքն ու հրեան ավելի լավ են վրացիների համար, քան հայը: Նա համարում է, որ այդպիսի հայտարարություններով հանդես եկողները չեն կարող թողություն ստանալ Աստծուց, քանի որ պառակտում են սերմանում Քրիստոսի եկեղեցու մեջ[6]:

Գոշն անդրադառնում է նաև կրկնամկրտության խնդրին, որը խստիվ դատապարտում է՝ կոչ անելով արմատախիլ անել այն: Դատելով վարդապետի հաղորդած տեղեկություններից՝ կրկնամկրտությունը ոչ միայն կատարվում էր հայերի նկատմամբ, այլ հայերը նույնպես այն կիրառում էին վրացիների ու հույների նկատմամբ[7]: Ուշագրավ է այն, որ համաձայն Մխիթար Գոշի հիշատակության, վրացական կամ հունական եկեղեցում նորից մկրտվում են նրանք, ովքեր նախընտրում են աշխարհիկ փառքը, և այդպիսիները պետք է դատվեն՝ որպես ուրացողներ:

Վարդապետը կոչ է անում փոխադարձ հանդուրժողականության, հարգել միմյանց դավանանքն ու սովորույթները[8]: Նա ոչ միայն խոսում է հայերի նկատմամբ հնչող զրպարտությունների մասին, այլև նշում հայերի, վրացիների, հռոմեացիների, ասորիների ու հույների դավանանքի գովելի կողմերը[9]:

---

[1] Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 167:
[2] Տե՛ս Մուրադյան Պ., նշվ. աշխ., էջ 171:
[3] Նույն տեղում, էջ 196-197:
[4] Տե՛ս Մելիքսեթ-Բեկ Լ., «Վարդապետք Հայոց հիւսիսային կողմանց» և նրանց ինքությունը, էջ 237:
[5] Մուրադյան Պ., նշվ. աշխ., էջ 196:
[6] Տե՛ս նույն տեղում, էջ 198:
[7] Նույն տեղում, էջ 259-261:
[8] Հիշարժան է, որ 1917 թ. Հայոց կաթողիկոսին հասցեագրված իր բարեկամական ուղերձում նույն գաղափարն է հայտնում Կյուրիոն Բ վրաց կաթողիկոս-պատրիարքը (տե՛ս «Արարատ», 1918, համար Ա-Գ, յունվար-մարտ, էջ 17-18):
[9] Մուրադյան Պ., նշվ. աշխ., էջ 253:

Ավարտելով իր թուղթը՝ Գոշը փափագում է, որ հինգ քրիստոնյա ազգերը, այսինքն՝ հույները, հռոմեացիներ, ասորիները, վրացիները և հայերը, համատեղ տիեզերական ժողով գումարեն, սակայն, գիտակցելով դրա անհնարինությունը, դիմում է Զաքարյան եղբայրներին, որպեսզի նրանք Թամար թագուհու միջնորդությամբ զսպեն ու վերացնեն հայոց եկեղեցու նկատմամբ կատարվող անօրինությունները:

3. Զաքարե Զաքարյանի թղթի և Սսի Ա ժողովի թվագրության խնդիրը

Հայ-վրացական եկեղեցական լարված հարաբերությունները կարգավորելու համար Զաքարեն որոշում է հայոց եկեղեցում հիմնականում ծիսական փոփոխություններ կատարելու միջոցով միասնության եզրեր գտնել վրաց եկեղեցու հետ: Նորամուծություններ կատարելու համար առիթ է հանդիսանում պատարագի շարժական վրան ունենալու խնդրանքը:

Ըստ Կիրակոս Գանձակեցու՝ վրացական բանակն արշավանքների ժամանակ իր հետ ամենուր քահանաներ և վրան էր տանում, ուր ամեն օր պատարագ էին մատուցում և եկեղեցական պաշտամունք կատարում, իսկ հայերի շրջանում այդ սովորույթը վաղուց վերացել էր, որի պատճառով «նախատէին վիրք զհայք»[1]: Այս պատճառով Զաքարեն դիմում է Մխիթար Գոշին, և որոշում են խնդրագիր ուղարկել Կիլիկիայի հայոց թագավոր Լևոն Մեծագործին (1198-1219) ու հայոց Հովհաննես Զ Սսեցի կաթողիկոսին: Հավանաբար պատարագի վրան ունենալը Զաքարեի համար հայոց եկեղեցում այլ նորամուծություններ ևս կատարելու պատճառ էր: Սա կարելի է հիմնավորել Զաքարեին ուղարկված պատասխան թղթի մի հատվածի միջոցով, որտեղ նշվում է, որ մեծ սպարապետը հետաքրքրվում է օտարի լծի ժամանակաշրջանում խեղաթյուրված քրիստոնեական կարգերով[2]:

Կիրակոս Գանձակեցու փոխանցած տեղեկությունների համաձայն Զաքարեն իր խնդրագիրն ուղարկել է այն ժամանակ, երբ ընդհարում էր տեղի ունեցել Հովհաննես Սսեցու և Լևոն արքայի միջև, սակայն Վարդան Արևելցու «Պատմութիւն տիեզերական»-ից կարող ենք ենթադրել, որ թուղթը ուղղարկվել է շատ ավելի շուտ՝ 1198 թ.՝ Լևոնի համար նախատեսված թագի հետ միասին. «վասն որոյ առաքեաց առ Լևոն որ այն ինչ օծեալ էր թագաւոր ի Ֆռանգաց և Յունաց, առաքելով նմա թագս ի վեցհարիւր քառասուն և վեց թուին. և էր ճոխ և յաղթազգեաց և հարկադիր և լծատանջ ամենայն շրջակայ ազգացն: Իսկ նոքա յամեցուցին զպատասխանին, վասն զի յետ տեառն Գրիգորի առ Տէր փոխելոյն՝ էառ զաթոռն Գրիգորէս, Տղայն կոչեցեալ. զոր կալեալ Լևոնի եդ ի բանտի զկնի ամի միոյ, որ և կամեցաւ ելանել ի բանդէն բերդին, պարանաւ իջմամբ, և մեռաւ, կտրելով պարանին: Եւ զաթոռն էառ Ապիրատն, ամս, հինգ: Եւ ապա տէր Յովհաննէս, որ կայր ապստամբ ի Լեւոնէ, յորմէ վշտացեալ թագաւորին Լեւոնի՝ դնէ կաթուղիկոս զտէր Դաւիթ յԱրքակաղնին: Եւ յերկպառակութենէն անտի հազիւ եկեալ ի մի կամս՝ ամենեքեան հաւանութեամբ արարին պատասխանի, առնել Զաքարի՝ զոր խնդրէ»[3]: Այստեղ, սակայն կա ժամանակագրական անհամապատասխանություն: Պատմիչը նշում է, որ նամակը Լևոնին ուղղարկվել է 1198 թ., սակայն պատասխանը ուշանում է, քանի որ թագավորի հետ ընդհարման արդյունքում բանտարկվում է Գրիգոր Քարավեժը և բանտից փախչելու ժամանակ մահանում[4]: Նաև հարց է ծագում, թե ինչու Լևոնը եկեղեցական ժողով չի հրավիրել Գրիգոր Ապիրատ կաթողիկոսի (1194-1203) օրոք, ու բավականին երկար ժամանակ խնդրագիրը մնացել է անտեսված: Բոլոր դեպքում, եթե Վարդան Արևելցու հաղորդած տեղեկությունները ճիշտ են, ապա կարելի է ենթադրել, որ Զաքարեն առաջին անգամ թուղթն ուղարկել է 1198 թ. և գուցե Հովհաննես Սսեցու օրոք արդեն երկրորդ անգամ է դիմել Լևոն թագավորին:

---

[1] Կիրակոս Գանձակեցի, էջ 167:
[2] Նույն տեղում, էջ 168-169:
[3] Վարդան Արևելցի, էջ 141:
[4] Գրիգոր Ե Քարավեժը մահացել է 1194 թ.: Տե՛ս Հովհաննիսյան Ա., Հայոց եկեղեցին Կիլիկյան շրջանում, Ե., 2018, էջ 69:

Կիրակոս Գանձակեցու երկում հստակ հիշատակված է, որ խնդրին լուծում տալու համար Զաքարեն պատվիրակներ է ուղարկում Կիլիկիայի Հովհաննես Զ Սսեցի կաթողիկոսի մոտ այն ժամանակ, երբ նա ընդհարվել էր Լևոն թագավորի հետ: Վեճի պատճառը թագավորի կողմից անհավատարմության մեղադրանքով կաթողիկոսի բարեկամների՝ Կոստանդին Կամարիտասի ու նրա որդիներ Պաղտինի և Ճոսլինի բանտարկությունն էր[1]: Հովհաննեսը հեռանում է Հռոմկլա, իսկ Լևոնը նրա փոխարեն կաթողիկոս է հաստատում Դավիթ Արքակաղնեցուն, և, ինչպես նկատում է Մ. Օրմանյանը, «Լեւոն Յովհաննէսի դէմ քէնը սնուցանելով եւ անոր իշխանութիւնը նսեմացնել ուզելով, Զաքարէի խնդիրը լուծելու համար Սիսի մէջ ժողով մը գումարել կուտայ Դաւիթի նախագահութեամբ»[2]: Այսպիսով, Լևոնը Սսում հավաքում է իր իշխանության տակ գտնվող եպիսկոպոսներին ու վարդապետներին, որոնք պատվիրում են Զաքարեին չշեղվել ուղղափառ հավատից՝ իր եղբոր նման[3] և, նրա խնդրանքը գտնելով համապատասխան Աստվածաշնչին ու առաքելական կանոններին, շարադրում են պատասխան նամակը, որն ընդգրկում էր նորամուծությունների ութ կետերը: Իսկ պատարագի համար նախատեսված վրանը Զաքարեին ուղարկվեց Հռոմկլայում գտնվող Հովհաննես կաթողիկոսի կողմից[4]:

Պատմագրության մեջ միասնական կարծիք չկա Սսի Ա եկեղեցական ժողովի գումարման թվականի շուրջ. հիմնական շրջանառվող տարբերակներն են՝ 1204 թ.[5] և 1207 թ.[6], իսկ ըստ Գ. Միքայելյանի՝ 1208 թ.[7]: Սկզբնաղբյուրներում չի հիշատակվում ժողովի հրավիրման ստույգ թվականը, այլ նշվում է, երբ Լևոն թագավորի ու Հովհաննես Զ Սսեցու միջև տեղի ունեցավ ընդհարում, և Դավիթ Արքակաղնեցին նշանակվեց կաթողիկոս, որի օրոք էլ տեղի ունեցավ ժողովը:

Ըստ Սմբատ սպարապետի «Տարեգրքի»՝ Կոստանդնուպոլսի գրավման տարում տեղի ունեցավ Լևոն թագավորի ու Հովհաննես Սսեցու միջև ընդհարում, և այդ տարում էլ Դավիթ Արքակաղնեցին դարձավ կաթողիկոս. «Իսկ ի թուին ՈԾԶ (656=1207) եկին ի Կոստանդինուպոլիս կոմսն Վենետկաց և Ֆլանտրն, և առին զքաղաքն Յունաց... և այնքան մեծացաւ ատելութիւն ի մէջ նոցա՝ մինչ զի ի բաց մերժեաց զնա թագաւորն և առաջնորդքն և իշխանքն Կիւլիկեցւոց. և եդին հակառակ նմա զարքեպիսկոպոսն Մսսայ և առաջնորդ Արքակաղնւոյն զտէր Դաւիթ կաթողիկոս Հայոց»[8]: Սակայն պատմիչի հիշատակության մեջ կա թվագրական սխալ՝ Կ. Պոլսի գրավումը խաչակիրների կողմից տեղի է ունեցել 1204 թ., ոչ թե 1207-ին: Չնայած կարելի է կարծել, որ նման կերպ հարցը լուծվում է, ու պարզ է դառնում ժողովի գումարման տարին, սակայն հնարավոր է, որ

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 105:

[2] Օրմանյան Մ., Ազգապատում, հ. Ա, էջմիածին, 2001, սս. 1840:

[3] Հայտնի է, որ Իվանե Զաքարյանը նորից մկրտվել էր վրաց եկեղեցում ու ընդունել քաղկեդոնականություն: Կիրակոս Գանձակեցին նշում է, որ Իվանեն, հրապուրվելով Թամար թագուհու կողմից, ավելի շատ գերադասեց մարդկային փառքը, այդ պատճառով էլ դավանափոխ եղավ (տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 166): Իսկ Վարդան Արևելցին անգամ Իվանեի՝ Խլաթում գերի ընկնելը կապում է Թամար թագուհու կողմից խաբվելու և հավատքի մեջ տկարանալու հետ (տե՛ս Վարդան Արևելցի, Տիեզերական պատմություն, աշխարհաբար թարգմ., ներած. և աստղանիշ. ծանո թ.՝ Գ. Թոսունյան, Ե., 2001 էջ 141): Իվանեի կինը՝ Խոշաքը, նույնպես քաղկեդոնական էր, և Զաքարեի մահվանից հետո վերջինիս հնգամյա որդուն՝ Շահնշահին, դարձնում է քաղկեդոնական (տե՛ս Վարդան Արևելցի, էջ 142: «Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ.», հ. II, կազմեց՝ Վ. Հակոբյան, Ե., 1956, էջ 136-137):

[4] Կիրակոս Գանձակեցի, էջ 170:

[5] Տե՛ս Չամչյան Մ., Պատմութիւն Հայոց, հ. Գ, էջ 179: Աբել արքեպիսկոպոս Մխիթարեանց, Երկերի ժողովածու, էջմիածին, 2009, էջ 261: «Հայաստանեայցս առաքելական Ս. Եկեղեցւոյ պատմութիւն», աշխատասիր.՝ Յուսիկ վարդապետ Մովսիսեան, էջմիածին, 2008, էջ 230: Մելիքսեդեկ վրդ. Մուրատեանց, Պատմութիւն Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ, էջմիածին, 2011, էջ 253: Մելիք-Թանգյան Ն., Հայոց եկեղեցական իրավունքը, էջմիածին, 2011, էջ 363:

[6] Տե՛ս Օրմանյան Մ., նշվ. աշխ., սս. 1835: Տեր-Մինասյան Ե., Հայոց եկեղեցին, էջմիածին, 2014, էջ 128: Հովհաննիսյան Ա., նշվ. աշխ., էջ 106:

[7] Տե՛ս Микаелян Г., История Киликийского армянского государства, Е., 1952, с. 175:

[8] Սմբատ սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 215:

Սմբատ սպարապետը Դավիթ Արքակաղնեցու՝ կաթողիկոս դառնալու տարին կապել է սխալ իրադարձության հետ:

Բարեբախտաբար Հեթում պատմիչը նույնպես անդրադարձել է այս իրադարձությանը և ավելի ստույգ տեղեկություն փոխանցել մեզ. «ՈԾԶ (1207). Թագաւորն Հայոց Լեւոն կալաւ զՍեւաստիաւսն Հեռի որդաւքն եւ զԿոստանց Խումարտիաշն, եւ Ճաւլինն եւ զՊաղտինն: Զտէր Յոհաննէս կաթուղիկոսն ընկեցին յաթոռոյն եւ եդին կաթողիկոս Հայոց զտէր Դաւիթ Արքակաղնցին»[1]: Հեթումն արդեն հստակ նշում է, որ Դավիթ Արքակաղնեցին կաթողիկոս է դարձել 1207 թ., հետևաբար կարող ենք ենթադրել, որ այս տարում էլ գումարվել է Սսի Ա եկեղեցական ժողովը:

4. Սսի Ա եկեղեցական ժողովի կանոնները հաստատելու Զաքարե ամիրսպասալարի փորձերը

Սսի եկեղեցական ժողովից հետո ստանալով Կիլիկյան Հայաստանի վարդապետների թուղթը՝ Զաքարեն ձեռնամուխ եղավ հաստատված կետերի իրագործմանը, որի համար հրավիրեց եկեղեցական ժողովներ Լոռեում, Անիում և Գետակնում:

Այսպես, Զաքարեն, իր ժառանգական տիրույթում՝ Լոռիում, հրավիրում է ժողով 1208 թ.[2], որին ներկա էին Հաղպատի եպիսկոպոս Գրիգորեսը, ով Զաքարեի քեռորդին էր, Մխիթար Գոշը՝ Գետիկի վանահայրը՝ հռչակված իր իմաստությամբ, Կեչառիսի առաջնորդ Գրիգոր Մոնոնիկը, Թեղենիքի Տուրքիկը և այլ նշանավոր եպիսկոպոսներ, վարդապետներ ու քահանաներ: Նշենք, որ Լոռեն հանդիսանում էր Զաքարյան Հայաստանի գլխավոր ռազմավարական կենտրոններից մեկը ու Զաքարյան տոհմի ձեռքին մնաց մինչև 1261 թ., կարևոր դեր էր խաղում առևտրի զարգացման մեջ[3]:

Ներկաներից ոմանք, լսելով Սսից եկած հրամանի մասին, ընդդիմացան, որոշներն էլ հավանություն տվեցին: Արդյունքում առաջացավ պառակտում հոգևորականների միջև. մի մասը կողմ էր նորամուծություններ կատարելուն, մյուսը՝ դեմ: Պատմիչի վկայությամբ ներկաներից շատերը գիշերը գաղտագողի հեռացան, որոշներին էլ Զաքարեն «արգել բռնութեամբ մինչև մատուցաւ պատարագն»[4]: Վարդան Արևելցու բնորոշմամբ, ընդդիմացող վարդապետները երկյուղ են արտահայտում, որ գուցե, այս կանոններով առաջնորդվելով, ստիպված լինեն այլ հարցերում ևս վրացիներին հետևել[5]:

Այս ժողովից հետո, որը ավելի շատ նորամուծությունները տարածելու միջոց էր, Զաքարեն այն վանքերում, որոնք իր իշխանության տակ էին «տայր բռնութեամբ առնել զտօն փոխման աստուածածնին, և վերացման սուրբ խաչին, ո՛չ ի կիրակէի, որպես սովորն էին, այլ զպատկերն զինչ օր և էր»[6]: Արդյունքում շատ վեճեր և տարաձայնություններ են լինում:

Զաքարեն ամեն կերպ ջանում էր, թեկուզ բռնությամբ, ներդնել նոր սովորությունները հայոց մեջ, սակայն նա անընդհատ դիմադրության էր հանդիպում հայ վարդապետների կողմից:

Քանի որ Հաղպատի վանքը հյուսիսային Հայաստանի թեմական կենտրոնն էր, իսկ Գրիգոր եպիսկոպոսը բավականին մեծ ազդեցություն ուներ երկրում և նույնպես դեմ էր արտահայտվել նորամուծությունների կատարմանը, Զաքարեն որոշում է այնտեղ ուղարկել Կիլիկիայից արևելք ժամանած Մինաս եպիսկոպոսին: Վերջինս, սակայն, երբ մոտենում է մայրավանքին, Գրիգորը մարդիկ է ուղարկում նրան ընդառաջ, որոնք «հարին զնա բրօք և զպաշտօնեայս նորա և սաստիկ վէրս ի վերայ եդեալ՝ թողին կիսամահ, և զջորիսն, որք էին ընդ նմա բեռնակիրք, գահավէժ արարեալ՝ սատակեցին»[7]: Այս

---

[1] Մաթևոսյան Կ., Հեթում պատմիչ Կոռիկոսցին և նրա ժամանակագրությունը, Ե., 2011, էջ 49: Տե՛ս նաև «Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ. », հ. I, կազմեց՝ Վ. Հակոբյան, Ե., 1951, էջ 78:

[2] Տե՛ս Ղարիբյան Հ., Լոռե բերդաքաղաքը և նրա պեղումները, Ե., 2009, էջ 39:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 38-40:

[4] Կիրակոս Գանձակեցի, էջ 172:

[5] Տե՛ս Վարդան Արևելց, էջ 141:

[6] Կիրակոս Գանձակեցի, էջ 172-173:

[7] Նույն տեղում:

լուրը իմանալով՝ Զաքարեն սաստիկ զայրանում է և հրամայում է իր մոտ բերել Գրիգորին և սպառնում նրան մահապատժի ենթարկել: Սակայն, Գրիգորը, տեղյակ լինելով, որ Մխիթար Գոշը մեծ հարգանք և վստահություն է վայելում Զաքարեի մոտ, փախչում է Նոր Գետիկի վանքը: Բայց միայն այս անգամ է Գրիգորը կարողանում խուսափել Զաքարեից, այնուհետև Զաքարեն նրան բռնում է Կեչառիսում և բանտարկում, իսկ Հաղպատի եպիսկոպոս է նշանակում Հովհաննես Խաչենցուն:

Այսպիսով, դեռևս չէր հաջողվում Զաքարեին իրականացնել իր ծրագրերը և ստիպել վարդապետներին կատարել Սսի ժողովում հաստատված որոշումները, քանի որ «ի բազում ժամանակաց հետէ չէի սովոր առնել, զոր խնդրէր նա»[1]: Լինելով իր նախաձեռնության մեջ հաստատամիտ՝ Զաքարեն միայն Լոռեի ժողովով չբավարարվեց և ցանկացավ ևս մեկը գումարել Անիում՝ այս խնդիրը լուծելու ու վարդապետների ընդդիմությունը հաղթելու նպատակով: Անին հանդիսանում էր ժամանակի գլխավոր մշակութային կենտրոններից մեկը, ուր բնակվում էին տարբեր կրոններ դավանող ազգություններ: Սակայն նման կրոնական բազմազանության հետ մեկտեղ Անիում տիրում էր կրոնական հանդուրժողականություն և քաղաքի համար վճռորոշ պահերին բոլոր կրոնական համայնքները սովորաբար հանդես էին գալիս միասնաբար[2]: Անիում մեծ թիվ էին կազմում հայ քաղկեդոնականները (հետագայում Զաքարեի որդին՝ Շահնշահը, Տիգրան Հոնենցի կառուցած Գ. Լուսավորիչ եկեղեցին դարձնում է քաղկեդոնական[3]):

1208/9 թ. հրավիրվում է Անիի եկեղեցական ժողովը (ժողովը գումարվել է Ս. Ծննդյան տոնից առաջ՝ հավանաբար տևել է դեկտեմբերի վերջից հունվարի սկիզբ): Զաքարեն կրկին կանչում է վարդապետներին և եպիսկոպոսներին, ինչպես նաև Մխիթար Գոշին, որը, պատճառ բերելով իր հիվանդությունը չի ցանկանում մասնակցել: Հավանաբար, Գոշի կարծիքը մեծ դերակատարություն պետք է ունենար, այդ պատճառով թե՛ Զաքարեն, թե՛ ընդդիմադիր ժողովականները ձգտում էին, այնպես անել, որ նշանավոր վարդապետը իրենց կողմից լինի: Արդյունքում, ժողովականների ճնշմամբ, Մխիթարը մեկնում է Անի:

Մեծ վարդապետը, պահպանելով չեզոքությունը, արդարացնում է և՛ ժողովականների ընդդիմությունը, և՛ Զաքարեի արարքները: Նա ասում է. «Դուք հոգայք վասն ազգիս, զի մի՛ այդպիսի առվորութեամբ խառնեսցին ընդ վիրս, և ես հոգամ վասն զօրավարիս, զի մի՛ լիցի սա վրացի, իբրև զեղբայր իւր, որում սպասեն վիրք»[4]: Ըստ Կիրակոս Գանձակեցու, Մխիթարը նշում է, որ իմաստ չունի ընդդիմանալ Զաքարեին, քանի որ նա հրաման ունի Կիլիկիայի կաթողիկոսից և Լևոն արքայից ու, անկախ վարդապետների կարծիքից, վարվելու է ինչպես ցանկանում է:

Սակայն ժողովից հետո Զաքարեն հրամայում է ընդդիմադիրներին աքսորել օտարություն: Մխիթարը, իմանալով այս մասին, պատվիրում է շատերին վերադառնալ իրենց տեղերը, իսկ մյուսներին որոշ ժամանակ անց իրենց վանքերը գնալու հրաման է տալիս Իվանեն՝ Զաքարեի եղբայրը:

Պետք է հավելել, որ Լոռեի ու Անիի ժողովները դժվարությամբ կարելի է եկեղեցական համարել: Վարդան Արևելցին, առհասարակ, անվանում է «ժողով՝ կատարեալ արանց»[5]:

Այս շրջանում հրավիրված եկեղեցական ժողովների վերաբերյալ բավականին հետաքրքիր տեղեկություն է հաղորդում Ստեփանոս Օրբելյանն իր «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատության մեջ՝ Կիլիկիայի Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսին հղված թղթում թողել է հետևյալ հիշատակությունը. «Իսկ յաւուրս վերջին, ի ժամանակս Զաքարիայի սպասալարի և Իվանէի աթաբէկին Վրաց, դարձեալ ժողով սուրբ հարցն եպիսկոպոսաց, վարդապետաց, քահանայից ի Գետականն մերձ Սևան կղզւոյն. և

[1] Նույն տեղում, էջ 174:
[2] Մաթևոսյան Կ., Անի. եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, Էջմիածին, 1997, էջ 190:
[3] Նույն տեղում, էջ 198-199: Տե՛ս նաև Лидов А., Росписи монастыря Ахтала. История, иконография, мастера, М., 2014, с. 19.
[4] Կիրակոս Գանձակեցի, էջ 177:
[5] Վարդան Արևելցի, էջ 141:

միանգամ յԱնի. և չարաչար նզովիւք բարձին և հեռացուցին զամենայն համախոհսն Վրաց և Հոռոմոց»[1]: Այստեղ պատմիչը որպես ժողովի վայր է հիշատակում Գետականը (Գետակն)[2], որի մասին չի խոսում Կիրակոս Գանձակեցին, ում աշխատությունը պատմագրության մեջ ընդունված է որպես հավաստի աղբյուր այս ժամանակաշրջանի համար: Հատկանշական է, որ Գետակնի ժողովը Ստեփանոս Օրբելյանը նշում է այն եկեղեցական ժողովների հետ մեկտեղ, որոնց ընթացքում մերժվել են բոլոր հերձվածները և հաստատվել է հայոց ճշմարիտ դավանանքը: Ն. Մառը, առանց այս ժողովի վայրի անունը տալու, մեջբերում է Ստ. Օրբելյանի հիշատակությունը և նշում, որ նզովքը վերաբերում է ոչ թե հայ քաղկեդոնականներին, այլ հայոց եկեղեցու անդամներից ոմանց[3]: Գետակնի ժողովի մասին հաջորդ հիշատակությունից կտեսնենք, որ խոսքը առաջին հերթին Զաքարե Զաքարյանի մասին է:

Ստեփանոս Օրբելյանի աշխատության աշխարհաբար տարբերակում այս բնակավայրի վերաբերյալ հետաքրքիր ծանոթագրություն է թողել Ա. Աբրահամյանը, ով տվյալ աշխատության գրաբարից թարգմանողն է: Ըստ Ա. Աբրահամյանի՝ Սևանի կղզու մոտակայքում նման անունով բնակավայր չկա, իսկ Գետակն (Գետ+ակն) անվան կազմությունից դատելով՝ կարելի է ասել, որ գետի ելման մոտ էր, հետևաբար պետք է ընկած լինի Հրազդան գետի ափին՝ Գոմաձորի մոտ, որը այժմ գտնվում է Սևան քաղաքի տարածքում[4]:

Այս ժողովի վերաբերյալ ավելի ստույգ տեղեկություն է պահպանվել Սամուել Անեցու ժամանակագրության շարունակողի մոտ, որը նաև տեղեկություն է տալիս ժողովի ընթացքի վերաբերյալ. «Ի ՈԿԱ (1212) թվին Մելիք Աշրափն մեռաւ, եւ Մէլիք Ավիադինն նստաւ: Յայսմ ամի Զաքարէ եւ Իւանէ կամեցան միաբանել զՀայս եւ զՎիրս եւ ժողովք արարին ի Գետակն բազում հարանց և վարդապետաց, ընդ որս էին աշխարհալոյս եւ աստուածազգեաց վարդապետքն՝ Գոշ Մխիթարն, Մոնօնիկն եւ Տուրքիկն: Եւ ոչ կարացին միաբանել, այլ հաստատուն մնացին Հայք յուղղափառ հաւատս, որ եւ խրոխտացեալ Զաքարէ վարդապետացն, նզովեցաւ ի նոցանէ, եւ գնաց յԱրտաւէլ եւ կտորեաց: Եւ ի գալ ամն մեռաւ ի ճանապարհին եւ եդաւ ի Սանահինն ուխտ»[5]: Ինչպես երևում է այս հատվածից, Գետակնի ժողովում փորձ է արվել միաբանվել վրացիների հետ, սակայն արդյունքում «խրոխտացեալ» Զաքարեն նզովվում է: Գուցե վրացիներից կամ հայ քաղկեդոնականներից նույնպես ժողովին մասնակիցներ են եղել, որոնց մասին պատմիչը տեղեկություններ չի պահպանել: Հատկանշական է այն, որ որպես ժողովի կազմակերպիչ նշվում է նաև Իվանե Զաքարյանը, որը չէր հիշատակվում Լոռեի և Անիի գումարումների ժամանակ: Հավանաբար սա կապված է այն բանի հետ, որ Գետակնը գտնվում է Սևանա կղզու մոտ, այսինքն՝ Իվանեի ժառանգական տիրույթում: Ըստ Կ. Մաթևոսյանի, Սամուել Անեցու «Ժամանակագրութեան» այս հատվածի շարունակողն է Ստեփանոս Օրբելյանը[6], որի «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատության մեջ նույնպես հիշատակվում է նման ժողով: Կ. Մաթևոսյանի կարծիքով Գետակնը նույն Գետիկ վանքն է[7], սակայն սա հակասում է Ստեփանոս Օրբելյանի այն վկայությանը, որ Գետակնը Սևանա կղզու մոտ է: Իսկ Վ. Հակոբյանը «Մանր ժամանակագրություններ...»-ի իր ծանոթագրության մեջ ենթադրում է, որ Գե-

---

[1] Ստեփանոս Օրբելյան, էջ 455:

[2] Տե՛ս Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների բառարան, հ.1, Ե., 1986, էջ 843:

[3] Տե՛ս Մառ Ն., «Արքաուն». Քրիստոնյաների մոնղոլերեն անվանումը հայ քաղկեդոնականների խնդրի առնչությամբ, ռուսերենից հայերեն թարգմ.՝ Է.-Մ. Շիրինյան, Ա. Մելքոնյան, Գ. Սարգսյան, Մ. Մամյան, ռուսերենից ֆրանսերեն թարգմ.՝ Ս. Ն. Մուրավյով, Ե., 2016, էջ 59:

[4] Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, աշխարհաբար թարգմ., ներած. և ծանո թ.՝ Ա. Աբրահամյանի, Ե., 1986, էջ 531:

[5] «Սամուէլ Անեցի եւ շարունակողներ: Ժամանակագրութիւն, Ադամից մինչև 1776 թ.», աշխատասիր.՝ Կ. Մաթեւոսյանի, Ե., 2014, էջ 237:

[6] Տե՛ս նույն տեղում, էջ 44-45:

[7] Տե՛ս նույն տեղում, էջ 417:

տակնի ժողովը վերաբերում է Լոռեում տեղի ունեցած հավաքին[1], որը, կարծում ենք, քիչ հավանական է:

Իհարկե, շատ ենթադրություններ և հարցադրումներ կարող են առաջանալ հիմնականում Գետակնի ճշգրիտ տեղադրության հետ կապված: Ամեն դեպքում, այս խնդիրը լրացուցիչ փաստարկների ու հետագա ուսումնասիրության կարիք ունի, քանի որ դեռևս հստակ պատասխան հնարավոր չէ տալ, նաև տակավին հայտնաբերվել է ընդամենը երկու վկայություն Գետակնի ժողովի վերաբերյալ:

5. Ամփոփում

Այսպիսով, Զաքարեին, նույնիսկ բռնի ուժով չհաջողվեց պարտադրել նորամուծությունները վարդապետներին, այդ պատճառով նա միչև կյանքի վերջ «վարեցաւ, որպէս կամէր, բայց եկեղեցիքն ամենայն առաջին պաշտամամբք վարեցան»[2]:

Զաքարե ամիրսպասալարը ցանկանում էր Հայոց եկեղեցում որոշ բարեփոխումներ և նորամուծություններ կատարելու միջոցով դադարեցնել վրաց վարդապետների կողմից Հայոց եկեղեցու հասցեին հնչող մեղադրանքներն ու կարգավորել երկու եկեղեցիների միջև հարաբերությունները: Սակայն այդ փորձերը որևէ արդյունքի չհանգեցրին: Նրա մահվանից հետո հստակ հայտնի չէ, թե ինչ տեսք ստացան հայ-վրացական եկեղեցական հարաբերությունները: Իվանեն ստանձնում է աթաբեկի պաշտոնը՝ ձեռք բերելով գրեթե արքային համահավասար իշխանություն: Հավանաբար նա, գիտակցելով, որ հայ վարդապետներին դավանական կամ թեկուզ ծիսական զիջումներ ստիպելը որևէ էական արդյունքի չի հանգեցնի և միայն էլ ավելի կլարի իրավիճակը, որդեգրում է կրոնական հանդուրժողականության քաղաքականություն՝ փորձելով հետևել Մխիթար Գոշի խորհուրդներին: Հայ-վրացական դավանական հարաբերությունների բարելավմանը հնարավոր կլիներ հասնել միայն տասնամյակներ տևող հետևողական հանդուրժողական քաղաքականության միջոցով, մինչդեռ Զաքարեն ցանկանում էր տեսնել միանգամից արդյունք՝ բռնի ստիպելով կատարել նորամուծություններ:

Կարելի է ենթադրել, որ Սսի Ա ժողովից հետո, ըստ էության, գումարվել է ոչ թե երկու, այլ երեք եկեղեցական ժողով. 1208 թ.՝ Լոռեում, 1208/9 թ.՝ Անիում և 1212 թ.՝ Գետակնում:

Արդեն 1220 թ. Անդրկովկաս են մուտք գործում մոնղոլական հետախուզական ջոկատները, որոնց դեմ ճակատամարտում Իվանեն ու վրաց թագավոր Գեորգի Լաշան մատնվում են պարտության[3]: 1236 թ. մոնղոլական բանակը ներխուժում է տարածաշրջան ու Անիում, Շամքորում պարտության մատնում հայ-վրացական միացյալ զորքերին[4]: Շուտով թուլանում է Վրաստանի քաղաքական ազդեցությունը, մոնղոլական վտանգի առկայության պայմաններում արդեն երկրորդական էին դավանական հակասությունները:

Давид Геворгян, Попытки Закаре амирспасалара наладить армяно-грузинские церковные отношения. В целях смягчения теологических расхождений присутствующих в армяно-грузинских церковных взаимоотношениях, амирспасалар армян и грузин – Закаре Закарян, пытается совершить в армянской церкви некоторые нововведения. С этим намерением, он обращается к католикосу всех армян и армянскому царю Киликии и в своей просьбе получает их согласие и поддержку. В столице Сис созывается церковный собор, который утверждает восемь правил.

Чтобы официально принять каноны в Армении, Закаре призывает три собора (в Лори, Ани и Гетакн), но во всех случаях он встречает сопротивление восточных консервативных вардапетов, которые срывают замыслы амирспасалара.

---

[1] Տե՛ս «Մանր ժամանակագրություններ...», հ. I, էջ 54:
[2] Կիրակոս Գանձակեցի, էջ 178:
[3] Տե՛ս Գրիգորյան Գ., Սյունիքը Օրբելյանների օրոք (XIII-XV դարեր), Ե., 1981, էջ 65-66:
[4] Նույն տեղում, էջ 66:

Ключевые слова: Закаре амирспасалар, Мхитар Гош, армяно-грузинские церковные отношения, церковные соборы, теологические споры, конфессиональная толерантность.

Davit Gevorgyan, Efforts of Zakare amirspasalar to reconcile the Armenian-Georgian ecclesiastical relations. In order to alleviate dogmatic divergences in the Armenian-Georgian ecclesiastical relations, Zakare Zakarian –the amirspasalar of Armenians and Georgians, attempts to carry out several changes in the Armenian church. For this purpose, he applies to the Catholicos of All Armenians and to the king of Kilikia. In response to his request, Zakare receives their approval and support. In the capital of Kilikia – Sis, the church council was convened and approved eight canons.

In Armenia Zakare summoned three councils (in Lori, Ani and Getakn) to officially adopt the canons. However, during all three councils he met the opposition of the Eastern conservative vardapets, who impeded the amirspasalar's plans.

Key words: Zakare amirspasalar, Mkhitar Gosh, the Armenian-Georgian ecclesiastical relations, church councils, theological disputes, confessional tolerance.